

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԵԳՈՐ ԵՐԵՎԱՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“. Կամ Tiflis, Rédaction „Mschak“. Տ է 1 է Ֆ օ ն № 253.

Պարագրուծները բաց է առաւտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տ է 1 է Ֆ օ ն № 253.

Քոյրերը՝ Սօֆիա Մուշկետովնայ, Օլիաննա Օրբելիանայ, եղբայրը՝ Ալէքսանդր, քրոջ աղջիկները՝ Ալէքսանդրա Մուշկետովնայ, Եւա Տէր-Բաղդասարեանցը իրանց ամուսիններով՝ խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին

Ա Ն Տ Օ Ն Զ Ո Հ Ր Ա Ք Ե Ա Ն Ի

Մահը՝ Յուզարկաւորութիւնը կիրակի, յուլիսի 25-ին, առաւտեան 10 ժամին կարմիր Աւետարանի եկեղեցում, իսկ թաղումը Մօջլիվանքի գերեզմանատանը։ Ամբիճը ամեն օր երեկոյան 7½ ժամին։ Հաւարար, Կախտիւնակայ փող. տուն կիկեղեցիի 4օ պահէ։

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Զինացիների վերաբերմունքը. — Ներքին Տնօնութիւնը. Մինիստրի սպանութեան մասնաւորութիւնները։ Մատենագրութիւնը. Առօրեայ հարցեր. Համերաշխութեան ճանապարհի վրա. Նամակ եւր-Բայազէտից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Արտաքին լուրեր. — Հեռ-Արտեր. — ՅԱՅ-ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԶԻՆԱՍՏԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵՐԸ

Զինաստանը նորից իր վրա է դարձնում քաղաքական մամուլի ուշադրութիւնը։ Զինաստանը, ասում է «Independance Tonkinoise» թերթը, մեծ յուզումների մէջ է ներկայումս (տես ՌՈՎ. Ս. 10)։ Ամենուրեք վիտտում են ետպոմակայ գործակալները։ Ամեն տեղ տպված յայտարարները կոչում են ազգաբնակիչները միանալու Եւրոպայի օտարներին դէմ։

Ինչը Պէկինի կառավարութիւնը այլ ևս չէ թաղանթում, որ իրենի ընդհանուր վիճակը վատացել է։ Պէկինի նախնային փոխարքան նորերս հրատարակեց մի հրաման, որով նա սպանում է մահվան պատիժ տալ (գլխատել) այն անձներին, որոնք խռովութիւն են գրում ժողովրդի մէջ։ Այդ անձների կարգին են պատկանում նրանք, որոնք յուզիչ լուրեր են տարածում, քարոզում են Մեծ Բուռնցը և Կարմիր Հապտեր կոչված գաղտնի կազմակերպութիւնների խորհրդաւոր ուսմունքները, թող են տալիս ասպատակութիւններ և առջը են բերում անկարգութիւններ։ Նոյնպիսի պատիժ է նշանակված այն պաշտօնեաների և զինուորականների համար, որոնք կը մասնակցեն գաղտնի ընկերութիւններին։ Հրամանի համաձայն հինգ տարվայ բանտարկութիւն է սահմանված այն մարդկանց համար, որոնք կը պատասպարեն յանցաւորներին։

Զինաստանի ներկայ անհանգիստ վիճակը պէտք է զեպի ինքը գրաւէ մեծ պետութիւնների լուրջ ուշադրութիւնը։ Ինչպէս յայտնի է Զինաստանը խոստացել է չէզոքութիւն պահպանել։ Եւ պետութիւնները իրանց միացեալ սպանովութեան տակ են դրել այդ չէզոքութիւնը։ Սակայն, ինչպէս երևում է, հասել է ժամանակը, երբ եւրոպացիները պէտք է միջոցներ ձեռք առնեն, որպէս զի չը խախտի Զինաստանի չէզոքութիւնը։

Եթէ արդարև խախտի այդ չէզոքութիւնը, իսկոյն կը փոխվի ներկայ պատերազմի բնակարանները, որը կո ստիպելը բոլոր պետութիւններին զէնքով միջամտելու չինական գործերի մէջ։

Որպէս զի բարդութիւններ առաջ չը գան, պետութիւններին հարկաւոր կը լինի, ըստ երևոյթին, չը բաւականապէս միայն Զինաստանի վրա ճնշում գործ դնելով, այլ նոյնպէս զիմուսներ անել Եւրոպային, որ պարտաւորվել է յարգել Զինաստանի չէզոքութիւնը։

Գնեալ Լեֆէրը, որ եւրոպական հսկող զօրքի հրամանատարն է, արդէն հեռագրել է Գանսի՝ պատրաստ պահելու

մի բառալիծն, որպէս զի հէնց առաջին պահանջը դրացիներուց, արշաւէ դէպի հիւսիսային Զինաստան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՆԻՍՏՐԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մայրաքաղաքի լրագրիչները լին են ներքին գործերի մինիստր Վ. Կ. Պէկինի սպանութեան մասնաւորութիւններով, որոնցից մինք առաջ կը բերենք մի քանիսը։ «ՌՈՎ.» ասում է. «Մինիստրը, ինչպէս միշտ, սրարշաւ էր ընթանում։ Երբ կառքը մտնեցաւ «Վարչաւան» հիւրանոցի շէնքին, այն ժամանակ անկիւնից (և ոչ հիւրանոցից) դուրս թուա մարդապանը, որ կարողացաւ շատ մօտ թռչել կարգին։ Ռուսը նստվել է կառքի մէջը և ոչ տակը։ Ռուսը շինված է եղել, ինչպէս երևում է, ամենազօրեղ պայթուցիկ նիւթերից մէկից, և լցված պայտի խոշոր մետաղով, որոնցից գտնվել են աղտոտ տեղի շրջակայքում։ Մինիստրի դիակի մօտ ընկած էր նրա թղթապանակն ամբողջապէս անփաստ։

«ՌՈՎ.»-ն ասում է. «Մարդապանը բռնվեց հետևեալ պարագաներում։ Մինիստրի առկից՝ նոյնպէս կառքով գնում էր ոտակաւոր զինուորիկներ։ Նա արդէն կամուրջն անցել էր, երբ տեղի ունեցաւ պայթիւնը։ Մուկը լցրել էր ամբողջ փողոցը. երկու րօպէ ոչինչ չէր երևում։ Երբ ծուրը քաշվեց, եւ մտնեցայ, որ օգնութիւն հասցնեմ, բայց արդէն ուշ էր, ասում է մի ականատես։ Այդ ժամանակ եկաւ և ոտակաւոր զինուորիկները։ Կառքի մօտ պտուկած էր մի մարդ, որին եւս ընդունցի մինիստրի «մարդու» տեղը և մտնեցայ օգնելու, բայց այդ ժամանակ կառքի մօտերով գնացող մի վիթխարկաւոր բաւեց. «տարեք դրան», դա է մարդապանը։ Հասարակութիւնը հաւաքվեց և քաշ տուց մարդապանին հիւրանոցի մուտքը։ Նա միջին հասակից բարձր է, ամեղված, մութ-չիկագոյն բերանով, սև գեղատուփ՝ երկաթուղու ծառայողի համազգեստով։ Նա պտուկած էր մէջքի վրա, ձեռքերի վրա յենված, երեսի վրա արին էր երևում։

«Սեթերբուրգե. Վեժոմոստի» լրագրիչն ասում է, որ ամենամօտաւոր վկան մի առեւտրական կին է, որի խօսքերին նայելով հիւրանոցից դուրս է թռել մի «ազատ» (ոչ զինուորական՝ քաղաքացի) մարդ, ձեռին մի կարգաբեր գլուխ և այդ կարգաբեր նետեց կառքի տակը։ Իսկ յետոյ խեղճ կինը որոտումից ուշադրաց է եղել։ «ՌՈՎ. Բր.»-ն ասում է. «Մարդապանը մի 25 տարեկան երիտասարդ է, բաւական լղբը կազմով։ Նրա մօտ, բացի ատրճանակից, գտան և մի երկրորդ սուր, լրագրական թղթի մէջ փաթեցան։ Այդ սուրը նրա ձեռքից առաւ մի թղթաթանձից ու օֆիցերից։» «Յարք. Վեժ.»-ն հարցրեց է, որ անյայտ մարդը դուրս գալով ի՞նչ մտաւոր պայտակաւոր, արագ առաջ վազեց, բռնելով ձեռքում գլանաձև պայթուցիկ գործիքը։ Նկատելով նրա գործիքը նետելու մտադրութիւնը, ոտակաւորական գործակալ Ֆրիդրիխ Հարթմանը, որ ուղեկցում էր մինիստրի կառքին վիթխարկաւոր, դիմեց դէպի նա և վիթխարկաւոր վայր գլորեց նրան, բայց ինքն էլ ընկաւ վե-

թխարկաւորից։ Դրանից օգտվելով, մարդապանը մի քիչ բարձրացաւ վեր և ուռմբը նետեց կառքի մէջ, ետեի մասում։ Ռուսը անմիջապէս պայթեց։ Մարդապանին ընկնցին Հարթմանը և մօտակայ ոտակաւոր, որը և տարաւ նրան հիւրանոցի առանձնասենեակներից մէկը, ուր ձեռքից առան վեցհարուածեան առըձնակը։ Մարդապանը մօտ 30 տարեկան է. նա կոչվում է Պորզնիկ։ Որքան կարելի եղաւ պարզել, մարդապանը ոչ վիթխարկու է և ոչ հրէայ։

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Արքայի վարդապետ Կոնստան. Ամուսնութիւն, ամուսնաւորութիւն և քաղաքացիական պակսի։ Երեք յաւելածով Պետական օրէնքներ. — Հ. եկեղեցու կանոններ. — Ամուսնաւորութեան դատարարութիւնը։ (Շարունակութիւն)

Այժմ տեսնենք՝ թէ արքայի Բարսեղ Մեծի և պետական օրինագրքի առաջ բերված կանոնն ու օրէնքը իսկապէս պարտագրք են դարձնում ծնողների համաձայնութիւնը մի ամուսնութեան վաւերական լինելու համար։

Ինչ վերաբերում է Բարսեղ Կեսարացու (Թերևս առասպելական) կանոնին՝ ամենքից քիչ հէնց ինքը Արսէն վարդապետը պիտի պարտադրէ նշանակութիւն ընծայէ զբան, քանի որ միակ օրէնսդիր մեր ժողովներն է ընդունում. ձիշդ է, հեղինակը նկատում է, իրը թէ «այս եկեղեցին ընդունել է Բարսեղի այդ կանոնը». սակայն թէ ինչպէս է ընդունել թէր, որ ժողովով այս մարդ լուսւ է, և ընդունցից անել հազիւ թէ կարողանայ։ Բարսեղի այդ կանոնը յամենայն դէպս ներկայումս պարտադիր ոչ չէ չունի և չէ գործադրվում։ Ինչ վերաբերում է առևտուր օրինագրքի X Հատ. I Մասի 6-րդ յօդուածը իրեն հիմք առաջ բերելուն, այս էլ մի թէրթիմագրութիւն է, որ դժբաղդաբար երբեմն ուրիշներն էլ են անում։ Բանն այն է, որ առանց ծնողների և խնամակարների թոյլտուութեան պակսի վարդապետը 6-րդ յօդուածը X Հատ. I Մասի Առաջին Գլխում է գեղեղված, որի վերնագիրն է «Ռուսադաւան անձերի ամուսնութեան մասին» (այս վերնագիրը, չը գիտեմ ինչո՞ւ, Արսէն վարդապետը բաց է թողել օրէնքների իր թարգմանութեան մէջ). հետևապէս և այդ գրական տախտակներից մի քանիսը պարզ չեն։ Հեղինակը աշխատել է ճիշդագրութեան բազմաթիւ տեսակ-տեսակ օրինակներ առաջ բերել խնդիրը պարզելու համար. սակայն նոյն լուս կարելի լինել պարզել, թէ անկի հանդամանքին և ընդհանուր ու ամբողջ կերպով բացատրվել։ Մի քանի մասնակի դրուծիւններ էլ տարակուսելի են։ Օրինակ հարաւ, քննին միթէ արիւնակից են և ոչ ինչամի. և եթէ սրանք ինչամի չեն, ապա ճրտեղից է սկզբում ինչամիութիւնը և վերջանում արիւնակցութիւնը։ Արքայի 6-րդ յօդուածը մի քանիսը պարզ չեն։ Գրագրական ամուսնութեան նուերված զլլում և հեղինակը շրջել է աշխատում այդ կերպի ամուսնութեան մասին մեզանում տարածված սխալ կարծիքը. և իրօք կարողանում է պարզ նկարագրութիւնով ձիշդ նայեցը տալ ընթերցողին, ցոյց տալով, որ ազատ, փոխադարձ և է պարտականութիւնից զուրկ կենականցութիւն չէ քաղաքացիական կոչված ամուսնութիւնը, այլ մի իրաւական կարգութիւն (ինստիտուտ) է, ըստ ինքեան նոյնպէս օրինաւոր, որպէս որ եկեղեցուց օրէնքով ամուսնութիւնը. տարբերութիւնն այն է, որ մէկ դէպքում պետութիւնն է ամուսնութեան իրաւունքը տնօրնողը և հսկողը, միս դէպքում եկեղեցին։

Յատկապէս արտասուված օրէնքների և կանոնների մասին նկատելու է, որ շատ այնպիսի օրէնքներ են մէջ բերված, որոնք հայրերիս ամուսնական խնդիրներում ոչ մի գործադրութիւն ունեւալու չեն. կանոնները շարժում էլ կան այնպիսիները, որոնք անպայման

արգելող մի վաւերական կանոն գոյութիւն չունի մեզանում, և տիրող գործնականը (պարտական) էլ այդպէս է. եթէ ամուսնացողները չափանաս են, ոչ մի բանանայ չի հրաժարվի, և իրաւունք էլ չունի հրաժարվելու պակսը օրէնքու ծնողների անհամաձայնութեան պատճառով, ի հարկէ, եթէ ուրիշ արգելքներ չը կան մէջտեղ։ Եւ այս տիրող սովորյթը կանոնական հիմքից զուրկ չէ, որ սակայն այստեղ առաջ բերելու կարիք չեմ տեսնում։

Ամուսնական խնդիրներում մի կարևոր հարց է՝ թէ ազգակիցներին ճիշդագրութեան աստիճանները ինչպէս պէտք է հաշուել. բաւական չէ, որ գիտենանք թէ այսքան աստիճանը հաս է, այսքանը չը հաս. անհրաժեշտ է նաև գիտենանք, թէ ինչպէս պիտի խմանանք այս կամ այն դէպքում քանի աստիճան լինելը։ Մեզանում ճիշդագրութիւնը հաշուելու գիտութիւնը կարծես մի խորհրդաւոր արհեստ լինի, որ իր նոյնպէս խորհրդաւոր մասնագէտներն ունի։ Դժբաղդաբար այս հետաքրքրաշարժ խնդիրը մեր ամուսնական իրաւունքի գրականութեան մէջ շօշափված, պարզված չէ. մինչդեռ աւելի ևս կարևոր էր այս անկ, քանի որ, ինչպէս երևում է, ազգակցութեան աստիճանները հաշուելու մեզանում սովորաբար և աւանդաբար գործածվող սխալներ մի ինքնուրույն սխալ է՝ աւարբեր թէ հոսմեականից և թէ գերմանականից։ Արսէն վարդապետը զբերում ամեն հարցի առիթով միշտ առաջ են բերված նաև այս եկեղեցիներում ընդունված կարգերը. երբեմն էլ մինչև անգամ համեմատում են մերին հետ. բայց այս գեղեցիկ եղանակից դժբաղդաբար բացատրութիւն է կազմում ճիշդագրութեան խնդիրը, որը թէև հեղինակի յատուկ ուշադրութեան է արժանացել, բայց դարձեալ դիւրբընտնելի պարզութեամբ նկարագրված, բացատրված և ամփոփ բանաձևի վերածված չէ։ Հոսմեական բանաձևը թէ «որքան ծնունդ այնքան աստիճան» ըստ ինքեան իսկապէս ոչինչ չէ պարզում, քանի որ հէնց հարցն էլ այն է, թէ ինչ ծնունդներ պէտք է ի նկատի առնել հաշուելիս. ճիշդագրութեան բանաձևը հէնց այս բանը պիտի պարզէ. իսկ երբ յայտնի է, թէ ովքեր են հարուստ անուրուս, այնուհետև սրանց թիւը հաշուել երեխան էլ կը կարողանայ։ Գրքում բերված ճիշդագրական տախտակներից մի քանիսը պարզ չեն։ Հեղինակը աշխատել է ճիշդագրութեան բազմաթիւ տեսակ-տեսակ օրինակներ առաջ բերել խնդիրը պարզելու համար. սակայն նոյն լուս կարելի լինել պարզել, թէ անկի հանդամանքին և ընդհանուր ու ամբողջ կերպով բացատրվել։ Մի քանի մասնակի դրուծիւններ էլ տարակուսելի են։ Օրինակ հարաւ, քննին միթէ արիւնակից են և ոչ ինչամի. և եթէ սրանք ինչամի չեն, ապա ճրտեղից է սկզբում ինչամիութիւնը և վերջանում արիւնակցութիւնը։ Արքայի 6-րդ յօդուածը մի քանիսը պարզ չեն։ Գրագրական ամուսնութեան նուերված զլլում և հեղինակը շրջել է աշխատում այդ կերպի ամուսնութեան մասին մեզանում տարածված սխալ կարծիքը. և իրօք կարողանում է պարզ նկարագրութիւնով ձիշդ նայեցը տալ ընթերցողին, ցոյց տալով, որ ազատ, փոխադարձ և է պարտականութիւնից զուրկ կենականցութիւն չէ քաղաքացիական կոչված ամուսնութիւնը, այլ մի իրաւական կարգութիւն (ինստիտուտ) է, ըստ ինքեան նոյնպէս օրինաւոր, որպէս որ եկեղեցուց օրէնքով ամուսնութիւնը. տարբերութիւնն այն է, որ մէկ դէպքում պետութիւնն է ամուսնութեան իրաւունքը տնօրնողը և հսկողը, միս դէպքում եկեղեցին։

Յատկապէս արտասուված օրէնքների և կանոնների մասին նկատելու է, որ շատ այնպիսի օրէնքներ են մէջ բերված, որոնք հայրերիս ամուսնական խնդիրներում ոչ մի գործադրութիւն ունեւալու չեն. կանոնները շարժում էլ կան այնպիսիները, որոնք անպայման

անվաներ և անգործադրելի են. այսպիսի օրէնքները և կանոնները ներկայութիւնը ոչ միայն աւելորդ է, այլ նաև ոչ-ցանկալի անտեղութիւնները պատճառ կարող է դառնալ:

Վերևում յիշատակված մանր թերութիւնները ունենալով հանդերձ՝ գիրքը վատ տպագրութիւն չէ անում ընդհանրապէս. մասնաւոր եթէ ի նկատի ունենանք, որ այս գիրքը հանդէս է գալիս որպէս հեղինակի համեստ «տաղին փորձ», որ ինքն էլ է յիշատակում իր առաջարկումը: Իր բովանդակութեամբ աւելի գործնական մի ձեռնարկի բնակարանութիւն ունի այս գիրքը, քան գիտական ուսումնասիրութեան. ըստ երևոյթի հեղինակի նպատակն էլ այդ է եղել. գրքի լեզուն պարզ է, ոճը գիւրբմբուրեղ, և գիրքը գրեթէ ժողովրդական լինելու չափ հանրամատչելի է:

Մեր հեղինակն և կանոնական իրաւունքը դեռ այնքան գուրդ է հղել հետազոտողների ուշադրութիւնից, որ ամեն մի լուծայ այս տպագրութեամբ խրատականքի է արժանի: Ցանկալի էր, որ հեղինակի այս առաջին փորձը վերջինը չը լինի, այլ նոր աւելի լուրջ և մշակված ուսումնասիրութիւններ լոյս ընծայվեն հեղինակի կողմից:

ԱՌՕՐԵԱՅ ՀԱՐՅԵՐ

Սօրերան, որ այժմ այնքան զոհեր է տանում Պարսկաստանում, սպառնում է մուսը գործել նաև Կովկաս: Մեր քաղաքային վարչութիւնները ամեն տեսակ միջոցներ են ձեռք անում ապրտախիլի ախտի առաջը առնելու համար:

Հեռագրիչներից տեղեկանում ենք, որ Թէրբանում խօրեայից մեռնողները թիւը վերջին օրերս պակասել է, բայց սարսափահար ժողովուրդը թողնելով քաղաքը, դիմում է դէպի գիւղերը՝ տարածելով հիւանդութիւնը և այդ տեղերում: Ուրեմն հարցը աւելի լուրջ կերպարանք է ստանում, ի նկատի առնելով, որ գիւղերում այն հակողութիւնը չը կայ, ինչպէս քաղաքում:

Ռուսաց կառավարութիւնը արդէն սահմանի վրա, որոշ տեղերում կորանտիններ է հաստատել, բայց դժբաղդաբար այդ միջոցը ոչ բոլորովին կարող է արգելել լինել խօսեալի Կովկաս մուտք գործելուն: Գարնան սկիզբից մինչև աշնան վերջը Պարսկաստանի գիւղերից հազարաւոր բանուկներ են գալիս Երևանի նահանգը աշխատելու, որոնցից շատերը անցնում են Արաքսը գաղտնի կերպով: Բացի այդ, Արաքսի վրա գտնվող մի շարք թուրքաբնակ գիւղեր զբաղվում են մաքսանհանգութեամբ և այդպիսով միշտ գաղտնի յարաբերութեան մէջ են Պարսկաստանի հետ:

Բայց ինչ դրութեան մէջ են գտնվում այդ գիւղերը: Մարդ կատարելապէս սպառն է գրանց անմաքրութեան վրա: Այդ գիւղերը բառի բուն նշանակութեամբ լողում են ախտի և կեղտոտութիւնների մէջ: Մտէք դրանց անհրաժեշտ և կը դժուարանաք զանազանի՛ր այդտեղ մարդիկ են ապրում, թէ անասուններ: Իսկ նրանք ու կացի համար խօսելը նոյն իսկ աւելորդ է: Իրանց մէջ կան մարդիկ, որոնք ամբողջ կենսութեամբ մարմինը չեն լուացել: Սպիտակեղէնի մասին գաղափար չունեն: Հագնելով մի որ և է նոր շապիկի, վրաներից չեն հանում մինչև նրա մաշվելը: Իսկ աղքատութեան հետեանք չէ, այդպէս են ապրում նոյնպէս և հարուստները: Աւելացրէք նաև բժշկի բացակայութիւնը և այն կարծիքը, որ ամեն մի հիւանդութիւն Աստուծու պատիժ է, այն ժամանակ պարզ կերևայ, թէ ինչ բարեխաղաղ հող են կազմում այդ գիւղերը զանազան վարակիչ հիւանդութիւնների համար:

Հայաբնակ գիւղերը, համեմատաբար, աւելի լաւ դրութեան մէջ են գտնվում, թէպէտ սանիտարական գործի կողմից ուշադրութեան են կարթու:

Կառավարութեան մի քանի պաշտօնական միջոցները դեռ ևս բաւական չեն սարսափելի հիւրի ճանապարհը կտրելու համար. հարկաւոր է, որ ինքը գիւղացին հասկանայ իր դրութիւնը և գիտակցօրէն գործէ: Բայց, դժբաղդաբար, խաւարի մէջ խորխորակ գիւղացին մի այդպիսի ժամանակ զանազան սրբավայրերում մատաղներ է գտնում նրանց գութի շարժելու համար... Հարկաւոր են մարդիկ, որոնք կարողանան թէ խօսքով և թէ գրքեր տարածելով հասկացնել գիւղացուն նրան սպառնող վտանգը:

Այժմ, ամառվայ արձակուրդների պատճառով, գիւղերում են գտնվում մեր ուսանող երիտասարդներից շատերը և, մեզ թւում է, որ

նրանց ուղղակի պարտականութիւնն է հաւակել գիւղացիներին և բացառել նրանց համաճարակի հետեանքները, ցոյց տալ միջոցներ նրա առաջն առնելու և ընդհանրապէս օգտակար լինել գիւղացուն մի այսպիսի վտանգաւոր բողոքում:

Երբ 1892 թուին խօլերան այնքան զոհեր էր տանում Կովկասում, Երևանի նահանգի մի քանի գիւղերում ուսանողները իրանք էին գործի գլուխ անցել և ետանդուն կերպով դիմադրութիւն ցոյց տալիս սարսափելի ախտին: Եւ գիւղացիք ուրախութեամբ լսում էին նրանց ու մեծ հաւատով կատարում բոլոր իրանց տուած պատուէրները և խորհուրդները:

Հետեանքը այն եղաւ, որ այդ գիւղերում համարեա թէ ոչ մի գոհ չեղաւ խօլերայից:

Պէտք է կարծել, որ մեր ուսանող երիտասարդութիւնը այժմ էլ, եթէ դէպքը պահանջէ, ցոյց կը տայ իր ետանդուն գործունէութիւնը:

Ար. Մակարեան Բաթում.

ՀԱՄԱՐԱՇԵՆՈՒԹԵԱՆ ՀԱՆՁՊԱՐԱՅԻ ՎՐԱ (Նամակ Երևանից)

Համերաշխութեան գաղափարը, աստիճանաբար, հող է գտնում իր համար Կովկասում և նա, թերևս, շուտով իրականութիւն դառնայ մեզանում:

«Մշակի» մէջ մեր շօշափած այլացել և այլալից ժողովուրդների համերաշխութեան խնդիրը արձագանք գտաւ թուրք մամուլի մէջ: Կովկասում գոյութիւն ունեցող համարեա միակ պարսկերէն լրագիրը—«Շարքի Ռուսը», թարգմանաբար տալով բերելով մեր յօդուածները, իր կողմից յայտնեց իր համակրութիւնը այդ հարցի առիթով և արձարծեց այդ միտքը այն հասարակութեան մէջ, որին ծառայելու կոչուեալ ունի: Այս ուրախալի երևոյթը անհետեանք չէր անցնի: Որքան էլ մեր դրացի պարսիկ ժողովուրդը մէջ լայնորէր ասած բանը թիչ տարածված լինի, այնուամենայնիւ կայ մի որոշ շրջան, որը հետաքրքրվում է իր ժողովուրդի հարցերով և ստանում է այս կամ այն լրագիրը, այս դէպքում «Շարքի Ռուսը» և լսում նրա խօսքերն:

Այսպէս մեղանում—Երևանում—մենք առիթ ունեցանք հանդիպելու մի քանի պարսիկների, որոնք ուշադրութիւն դարձրած լինելով «Շարքի Ռուսի» մէջ շօշափած այդ խնդրին, խօսելու էին միանգամայն համակիր կերպով ազգերի և ցեղերի—մասնաւորապէս հայերի և թուրքերի համերաշխութեան խնդրի նկատմամբ և արձարծելով այս նոյն միտքը իրանց շրջանում: Այսպիսի հայեացքներով մարդիկ իւրաքանչիւր հասարակութեան մէջ, շատ չէ, բաւական էր ունենալ մի երկու տասնեակ, որ նրանց գաւանած սկզբունքները շուտով ընդհանրանային և հետեանք առաջացնէին: Իսկ մենք ուրախութեամբ արձանագրում ենք այն փաստը, որ պարսիկ ժողովուրդը մէջ այժմ նրկատելի են հասկացող, խելացի հայեացքներով տէր անձնաւորութիւններ աւելի մեծ թիւով, քան ընդունված էր կարծել: Անս այս հանմերաշխութեան մի երկու փաստեր, ոչ միայն քաղաքներում ապրող—հետեանք համեմատաբար մտաւորապէս աւելի բարձր կանգնած հասարակութիւնների շրջանում, այլ և գիւղական տարրը—բուն ազգաբնակչութեան խաւերում, ուր որ և է առողջ միտք, խելացի գործունէութիւն մտցնելու համար կարելիութիւն գտնելը այնքան էլ դիւրին բան չէր: Մակայն փաստը այսօր գալիս է մեզ համոզելով, որ մեր ժողովուրդը համերաշխութեան գաղափարը, նրա բարեբար հետեանքները ըմբռնելու մէջ այնքան էլ յետ չէ մնացել և բաւական է մի առիթ, որ նա ունենայ բաւական օրինակներ:

Երևանի նահանգում, ուր հայ և թուրք ժողովուրդներ ապրում են միասին, շատ սովորութիւններ կան, որոնք այդ միասին ապրող, փոխադարձ շահերով և դրացիական կապերով կապված երկու ազգութիւնների մէջ թշնամական յարաբերութիւններ, որոնք ամեն անգամ առիթ են փնտրում անմիտ վրէժխնդրութեան գործողութիւններ առաջացնել: Այդպիսի թշնամական յարաբերութիւններ, նայած պիսի թշնամական յարաբերութիւններ, նայած ընդունել են մեծ կամ փոքր ծաւալ: Վերջին տարին, չը գիտենք ինչ առիթներից, լարված յարաբերութիւնների մասին յամառ տարածվող լուրերը լուրջ մտաւորականութիւն էին պատճառում: Իզգիք շրջանում սպասվում էր

ընդհարում, շամարուի մէջ տեղի ունեցաւ կռիւ և միմեանց վիրաւորելու դէպք: Որովհետև այդպիսի դրութիւն ստեղծելու առիթներ մէջտեղ չը կային, ուստի շատ շուտ ակնյայտանի դարձաւ, որ այդ բոլորը առաջ էր գալիս չարամիտ և նենգաւոր մարդկանց դիտաւորեալ տարածած սուտ լուրերից, որոնք այդ կռիւների մէջ փնտրում էին որոշ շահ:

Թշնամական յարաբերութիւն, այն էլ սուր կերպով առաջ եկաւ նաև Երևանի գաւառի Բաշգառուի հասարակութեան հայ և թուրք ժողովուրդների մէջ, տեղի ունեցան նոյն իսկ փոխադարձ գաղտագողի սպանութիւններ, սակայն այդ քանի դէմ, որքան լսեցինք, դուրս եկան երկու կողմերից հասակաւոր և դիք ունեցող մարդիկ, հրապարակով խոստում և երդում արեցին վերջ դնել այդ թշնամութիւններին, իւրաքանչիւրը իրանցից պարտաւորվելով ըստզել իւրայինների մէջ մէր, համերաշխութիւն և դրացիական բարի յարաբերութիւն:

Այսպիսի մի այլ օրինակ տեղի ունեցաւ նաև մի այլ տեղ:

Թշնամական յարաբերութիւն ստեղծվել և սուր կերպարանք էր ընդունում նաև Ղամարուի շրջանում Չիգաւուր գիւղի հայերի և թուրքերի մէջ, և ահա այդպիսի էլ գտնվեցին մարդիկ երկու կողմերից, որոնք ըմբռնելով այդպիսի յարաբերութիւնների կորստաբեր հետեանքները, կայացրին հաշտութիւն այդ թշնամացած տարրերի մէջ:

Որքան էլ մեր բերած այս երկու օրինակները անհատական բնակողութիւն կրեն, այնուամենայնիւ կարելի է վստահ աւել, որ մեր ժողովուրդը ոտք է դնում արդէն համերաշխութեան ճանապարհի վրա և թերևս մեր օրից ունենանք երկու ազգութիւնների հաշտութեան նոր նոր օրինակներ առաջ բերելու:

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ

Յուլիսի 15-ին Յուլիսի 11-ին, կիրակի, Նոր-Բայազետի գաւառի Ներքին-Ղարանուղ գիւղում կայացաւ մերքեի ընտրութիւն մեր գաւառի համար: Գաւառապետ պ. Սո. Ղորպանեանցի ներկայութեամբ այդ պաշտօնի համար քուէարկվեցին նոր-բայազետի պ. Բէգաւր Նալբանդեան և Մարաթ թուրք գիւղացի պ. Սալմաթա Սուլթանով: Գուէները բազմութեամբ (607 ընդդէմ 41-ի) մերքե ընտրվեց պ. Բ. Նալբանդեանց, իսկ պ. Ս. Սուլթանով որոշվեց կանդիդատ, որոնք ներկայացվել են ուր հարկի է ի հաստատութիւն:

Նոր-Բայազետի գաւառում մինչև այժմ միքարի (Չրբաթան) պաշտօն չը կար, քանի որ այդ շրջանում հողաբաժիններից շատ քչերն են օգտվում ջրից, այն ինչ ամբողջ գաւառի թէ ցանքերի և թէ խոտատեղերի մեծ բաժինը անջրդի է: Բայց և այնպէս ջրի հարցը գնալով այն աստիճան կարևոր է դառնում հողագործական պայմաններում, որ նրա մի կաթիլի կարիքը երբեմն զգալի է լինում, որի պատճառով անգալիս զգամազալ է ծագում ժողովուրդի մէջ և նոյն իսկ արեւմտեղութիւն տեղի ունենում, այնպէս որ ջրի համար ուղղակի եղբայրը եղբորը սպանում է (այդպիսի մի դէպք պատահեց մեր գաւառի Ալի-Ղալի գիւղում վերջերս): Եւ ահա այդ անախորժ հանգամանքների պատճառով, որպէս զի մարդիկ ջրի համար չը տուժն բարոյապէս և ներթափալէս և որ ջուրը իրար ձեռքից գողով չը խնայապօրինի կերպով,—կառավարութիւնը անհրաժեշտ համարեց միքարի հաստատութիւնը նաև մեր գաւառում:

Ժողովրդական-անտեսական շահերի տեսակետից այդ պաշտօնը մի բացառիկ միջոց է, որը կարող է իր բաւարար, շօշափելի արդիւնքն ունենալ հողագործական կենսութեան, երբ պաշտօնավարող լինում է մի ժրջան, անկաշառ, գործունեայ անձնաւորութիւն: Այդ տեսակետից կարելի է վերը յիշված ընտրութիւնը աչող համարել, քանի որ պ. Բ. Նալբանդեանց կարող անձն է այդ պաշտօնի համար, ուստի ցանկանալով հանդերձ նրան աւելի տոկոսութիւն այդ գործում, մենք խորհուրդ կը տայինք նրան անաշատութեամբ և արգարապէս բաժանել ջուրը հերթով բոլոր օգտվողներին՝ աւանդ խորութիւնը դընելու հարուստի և աղքատի, զօրի և անզօրի մէջ, մասնաւոր, որ դրանով կարող է ժողովուրդի մեծամասնութեան յոյսը արդարացնել: Աւելացնենք, որ պ. Նալբանդեան մասամբ ծանօթ է գաւառի ազգաբնակչութեան, գիտէ ջրով տեղերի ժողովուրդին, ճանաչում է լաւ

ու վատ բնակչութիւն, հարստին, աղքատին, գիւղի համայնի և հասարակ դասին և այլն: Ուրեմն ժողովրդական շահերի կամ գործի տեսակետից՝ որքան մեծ է կոչվելու, որքան ծանր պատասխանատու պաշտօնը, այնքան էլ մեծ բան է սպասվում մեր գաւառի նորընտիր միքարից, մի գաւառ, որ կարօտ է ամեն բանի... Կոստ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, յուլիսի 22-ին, Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեօդօրօվնայի անուանակոչութեան տօնի օրը հանդիսաւոր պատարվեցին Թիֆլիսի Միօնի եկեղեցում, Վանքի տաճարում և այլ աղօթատեղերում: Արախնալի սարից արձակեցին թընդանօթի 21 հարուածները: Գաղաքը զարդարված էր դրօշակներով, իսկ երկկողման տան առաջ՝ համաձայն նոր կարգադրութեան (առաջ կատարվում էր կառավարչապետի բնակարանի դիմացը):

Թիֆլիսի աւետարական ուսումնարանի հոգաբարձական խորհուրդը մտադրութիւն ունի միջնորդութիւն յարուցանելու և խնդրելու ֆինանսների մինիստրութեան ուսումնաբանական մասից, որ թոյլատրվի իրան պակասեցնելու յիշեալ պարոցները ուսման վարձի չափը: Ամենայն խրախուսանքի և քաջալերութեան արժանի է հոգաբարձական մտադրութիւնը, որովհետև թէ Թիֆլիսի յիշված պարոցի, թէ վաճառականական պարոցի և թէ Ալեքսանդրօպօլի համանուն պարոցի ուսման վարձերը բոլորովին չեն համապատասխանում տեղական ժողովուրդի զբաղանքներին, որովհետև այդ պարոցներում սովորում են աւսասարակ միջին և աղքատ դասակարգերի զաւակները:

Կովկասեան դպրոցական շրջանի հոգաբարձութեան կարգադրութեամբ, օգոստոսի կէսերին Թիֆլիսում հրաւիրվում է ժողովրդական դպրոցների ուսուցիչների ժողով: Այդ ժողովը կազմելու պարտականութիւնը զբոված է Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների տեսչի վրա, իսկ ժողովները ղեկավարելու են 1) բնական գիտելիքների ուսուցիչ Ա. Կ. Վերստը և 2) աշխարհագրութեան ուսուցիչ Ի. Ա. Ստանիշվիլին:

1904 թվի ընթացքում Կովկասի գիւղական գոտաբնակից 7,500 ր: է յատկացվում իբր նպատակ երկրագործական և արհեստաւորական ուղղիչ գաղութներին:

Կովկասեան երկրի դիմաւոյական գումարներից ճանապարհների բարելաւման և նոր ճանապարհների շինելու համար յատկացված է 280,322 ր, որից 94,249 ր, նոր ճանապարհների, իսկ 185,973 րուրջին եղած ճանապարհների բարելաւման համար:

Երկրագործութեան դեպարտամենտը Պետերբուրգից ինտորուկտօրներ և մասնագէտներ է ուղարկել Անդրկովկաս, որպէս զի նրանք տարածեն տեղական երկրագործ ազգաբնակչութեան մէջ ծխախոտի մշակութիւնը:

„Визж. Вѣд.“ լրագիրը հաղորդում է, որ այս տարի աշնանը Պետերբուրգում կը սկսվեն սիմվոլիստ-նկարչների նոր խմբի ժողովները: Բացի իր նկարչական գործունէութիւնից, խմբի անդամները մտադրել են հրատարակելու իրանց սեփական թիւթը՝ Բիւրլինի սիմվոլիստների հրատարակութեան նման: Թերթի արտաբերել և նկարները բոլորովին ինքնօրինակ են լինելու: Թերթը հրատարակվելու չէ պարբերաբար. նա լոյս կընծայվի, երբ բաւական թիւով պատկերներ ու ներթեր հաւաքվին:

ՄԱՆԳԼԻՍԻՑ մեզ գրում են. «Այստեղ են գտնվում մեր դերասանները՝ տիկին Միլիբանդ, պ. պ. Յարութիւնեանը և Միլոզոյանը: Ինչպէս տեղեկացանք, պատրաստվում են, մի քանի ներկայացումներ տալու սերողների հետ միասին. կը ցանկանք աշողութիւն»:

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են. «Միգանում սովորական երևոյթ է դարձել գիշերով տուն կտրելը. մօտ մի ամսից ի վեր է, որ յանդուգն գողերի մի խմբակ, քաղաքիս առաջին մասում, այսինքն հայերի թաղում սրա ու նրա տունը կտրելով տանում են: Չը նայելով որ աստիճանութիւնը հետամուտ էր լինում այդ

